

Պետրոս պտրք.՝ Հնդկաց նուիրակ Սարգիս վրդ. Կիպրացիին ձեռքով խնդրագիր կուտայ Լուսիտանիոյ թագուհիին Ս. Յակոբի վանքի իրաւունքին ստացման համար, որուն կը ձայնակցին փոխանորդ կարգուած չորս հայերն ալ: Թագուհին նոյն խնդրագիրը հասնելէն առաջ, տնօրինած էր որ Մատթէոսի ժառանգութիւնը բաժնուի ոչ ըստ կտակի, այլ այնպէս որ նոյն հարստութիւնը երեքի բաժնուի, երկուքը տրուի որդւոյն, եւ երրորդ բաժինին կէսը Մարիամ Փէկումի, որ հանգուցելոյն քրոջ աղջիկն էր, և միւս կէսը միայն վճարուի չորս վանքերուն: Մինչեւ 1799 Դեկտ. չգործագրուիր թագուհիին հրամանը եւ Կիպրացի Սարգիս վրդ. ո՛րեւէ տեղեկութիւն չհաղորդէր այդ մասին: Լուսիտանացւոց իշխանութիւնը Մագաօի վրայէն ջնջուելով՝ կ'երևի թէ՛ նոյն կտակն ալ կորսուած է. մանրամասնութիւնները տեսնել (Սաւայան, էջ 975-77):

3

ՅՈՎՀԱՆՃԱՆ ՀՆԴԿԱՀԱՅ. — Կենդանութեանը՝ Ս. Յակոբի վանքին ի նպաստ գումար մը կը կտակէ ու կը գնէ անգղ. ընկերութեան կտակատան մէջ: Յիշեալին մահէն վերջ՝ կտակահատար Մովսէս Խաչիկ Առաքել պարտքի տակ մնալով՝ կը վաճառէ կտակին մուրհակները. այս եղիլութիւնը երբ Թէոդորոս պտրք. 1807ին կը լսէ, անմիջապէս հրահանգ կուտայ Հնդկաց նուիրակ Յակոբ վրդ.ի, որպէսզի սոյն կտակալին գործը հնդկահայ իշխաններու հետ բարւոք կերպով կարգադրէ, բայց անօգուտ. վասնզի կտակահատարը ոչնչացուցած էր կտակարարին գոյքերը, ինչպէս նաև իր իսկ ստացուածքն ալ (Ժպե. Հատ. Բ. էջ 165):

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԻԻՄԻԻՇԵԱՆ, ԿԵՍԱՐԱՅԻ. — Ծ. 1817ին. վաճառական. իր հօրը անունով վարժարան մը կը բանայ Կեսարիոյ մէջ: 1892ին 10,000 ոսկի կտակած է զանազան բարեգործական և կրթական հաստատութիւններու: Կտակեալ գումարին կիսով պիտի գնուի միւլի կալուածներ, իսկ միւս կէսը պիտի շահագործուի և արդիւնքին հարիւրին տասը պիտի յատկացուի Ս. Յակոբի վանքին և մնացեալը զանազան հաստատութիւններու: Կիւմիւրլիսան վախճանած է 1902ին Մարսէլի մէջ: